Կոմիտասն» (անդ)։ — Շարունակենք մեր քաղուածները։

Մարտ 27. «Կոմիտասին *չալ մի ետու մսրայ» (թղ.* 233*ա)։ —* 1699 *Ապրիլ* 27. «*Խաչատուր վարդապետն զփափի գրեալ գիրն որ առ Նահապետ կաթողիկոսն՝ հայերէն թարգմանեաց մեզ. Հաճի Մկրտիչն և* Տէր Կոմիտասն *առ մեզ» (թղ.* 234*ա)։ — Յունիս* 24. «Կոմիտասն *առ մեզ, քանզի գիր էին գրել Նորա Լեհու վարդապետն Վարդան (և) Մխոն ի Հռոմ» (թղ.* 235*բ)։ —* 1700 *Ապրիլ* 28 *Կիրակի*. «Կոմիտասն *ծանուցում (ի Ս. Գէորգ), ես չխօսեցայ ի դառնութենէ սրտիս» (թղ.* 244*ա)։ — Մայիս* 7. «*Հաց կերաք, ելաք զայիխով* Կոմիտասն, *Գասպարն, Պախչին և մեր տղայքն՝ գնացաք ի Առնաւուտքոյն, ի պախչան խմեցաք և դարձաք ի Ս. Գէորգ» (անդ)։ — Մայիս* 14. «*Առաւօտս կանուխ ելաք Սուլիմանաստրոյ, գնացաք զայիխով ի Վէզիրի եալին. թագաւորական զայիխներն ընդ մեզ գնացին ի Պէկտէրէն (Պէօյիւքտէրէ), զվալիտէն բերին անտի նավով, ի դարձին ընդ մեզ. գինի եւ սէֆա։ Երկու անգամ նստաք ի պախչան. պատիւն Պալի զալֆային էր, Նվիրակ Խաչատուր վարդապետն, Պապա Գիրոն,* Կոմիտասն, *Պախչին և մեր տղայքն. և օրս ամպ մինչև երեկոյն. և զղայեղից և զայլ ամենայն խարճն Պալի զալֆան իւր քսակէն ետես. եւ եկաք ի Ս. Գէորգ երեկոյն» (անդ)։ — Մայիս* 16. «*Մէկ տղա մի եկաւ թէ Ուխտաւորքն ի Թէքիրտաղի եկին՝ ես ընդ նոսա էի ... եւ ես ելեալ գնացի մինչ ի Մախրգեղ, Խաչատուր վարդապետն ընդ յիս. նստաք ծովեղրն, եւ ի դարձին Մզ. Եղիան, Մզ. Գասպարն եւ* Տէր Կոմիտասն *հանդիպեցան, գնացին ընդ յառաջ ուխտաւորաց, եւ մեք եկաք ի Ս. Գէորգ» (թղ.* 244*բ)։ — Յունիս* 16 *Կիր*. «*Չխօսեցա յեկեղեցին ո՛չ ծանուցում եւ ոչ քարոզ.* Կոմիտասն *խօսեր էր եւ օգուտ չունէր» (թղ.*